



ՉԱՐԱԹԱԹԵՐԹ

Իսթանբուլի 10 Շր. սարկիսև

Հասցե՝

Ред. на в. " ВЕРАДЗНУТЮНЪ " — Руссе

Réd. du jour. " VERADZNOUTIOUN " Roustchouk

ԵՐԿՈՒ ԽՕՍԻ ԳԱՆԱՆԱՓՈՒՆԵՐԻՆ

Շատ անգամներ է մեզ պատահել լսելու, թե ինչպես մարդիկ մի առանձին պարծենկոտութեամբ ասում են, որ իրենք մի ժամանակ շատ «թունգ» հնչակեան էին, իսկ յետոյ այդ կուսակցութիւնից զատեցին և գնացին Իրանակցութեանը միացան։ Պակաս չեն և այնպիսիները, որոնք ոչ պակաս պարծենկոտութեամբ ասում են, որ իրենք Իրանակցութիւնից հեռացել և հնչակեաններին են միացել։ Լսում ես այդ կարգի միամիտ խոստովանութիւնները և ուսերդ վեր ես քաշում։ Զարմանալին նամանակն աչք է որ այդ անսկզբունք ոչխարամտութիւնից յառաջացած գաւաճանութիւնը ամենայն պարզամտութեամբ յայտարարում է և մեր պարբերական մամուլի մէջ, ասել է այդ կարգի մարդիկը ոչ միայն անգրագէտ ուսմիկներ չեն, այլև հրապարակաբոս լինելու հաւակնութիւն ունեցող ինտելիգենտներ են։

Մենք հաւատացած ենք, որ եթէ մի այնպիսի օտարականի պատահի կարգալ այդ տողերը, որը անձանթ լինի «հնչակեան» և «Իրանակցութիւն» բառերին, նա անպատճառ պիտի ենթադրի, թէ դրանք մի տեսակ կրօնական ազանդներ են և այդ գրողներն էլ անպատճառ Ուրմիայի կամ Զուլամբիկի կողմերի ասորիներն են, որոնք ամիսը եօթ անգամ իրենց դաւանանքը փոխում են։ Եւ իսկապէս, հնչակեանութիւնից Իրանակցականութեան և ընդհակառակը տեղափոխութիւն կատարողները ինչո՞վ են տարբերում այն ասորիներից, որոնք այս կամ այն հանգամանքի ազդեցութեան տակ մէկ օր բողոքական են դառնում, միւս օր յունադաւան, երրորդ օրը կաթոլիկ, բազմիստ, իւնիտերեան և այլն և այլն, նայելով թէ քամին ո՞ր կողմն է փչում։ Բայց ոչ, ներդրութիւն, բոլորովին էլ չէ կարելի ասել թէ ասորիների և մերայիների մէջ տարբերութիւն

չը կայ. տարբերութիւնը այն է, որ դաւանափոխ ասորիները, շատ անգամ զգալով իրենց վարմունքի տգեղութիւնը ու վատութիւնը, ծածկում դադարի են պահում իրենց դաւանափոխութիւնը, այնինչ մերայիները ցիւրիկ կերպով պարծենում և մամուլի միջոցով յայտարարում են այդ ի լսւր ամբողջ աշխարհի Բացի դրանից՝ կայ և մի ուրիշ հանգամանք, որը դարձեալ ասորիների օգտին է խօսում։ Ախր կաթոլիկութիւնը, յունադաւանութիւնը, բողոքականութիւնը և այլն զատ-զատ վարդապետութիւններ չեն, այլ մի և նոյն վարդապետութեան տարբեր բացադրութիւնները միայն, բացադրութիւններ, որոնք բոլորն էլ հիմնւած են միևնոյն ծրագրի — Աւետարանի — վրայ։ Բայց արդեօք հնչակեանութիւնն ու Իրանակցականութիւնն էլ միևնոյն ծրագրի տարբեր բացադրութիւններն են։ Չէ՞ որ այդ երկու քաղաքական կուսակցութիւններն էլ ունին իրենց զատ-զատ շատ որոշ ծրագրերը, որոնցից իւրաքանչիւրը կազմւած է որոշ սկզբունքների վրայ, ըսկզբունքներ որ արդիւնք են այդ ծրագրերի մշակողների քաղաքական, տնտեսական ու սօցիալական աշխարհայեցողութեան և որոնք ղեկավարում են անպատճառ որոշ դասակարգային շահերով։ Այդ ծրագրերը գաղտնի չեն պահւած, այլ տպագրւած են հազարաւոր օրինակներով և նրանց զանազան կէտերն էլ հարիւրաւոր անգամ մաս-մաս լուսաբանւած են «հնչակի» «Իրանակցական» ու «գրանց օճանդակի» թերթերի մէջ։ Այդ ծրագրերը այն աստիճան պարզ են և իրարից այնքան տարբեր, որ դրանց միմիանց հետ չփոխելը ամենամեծ սգիտութեան արդիւնք միայն կարող է լինել։

Հնչակեան կուսակցութիւնը իր հրապարակ գալու օրից միշտ եղել է սօցիալիստ յեղափոխական կուսակցութիւն և յետևող, գիտութեան մէջ յայտնի, «Մարքսիզմ» վարդապետութեան։ Այդ

կուսակցութիւնը ամեն մի քաղաքական կռիւ համարելով տնտեսական կռիւ, որ դարերից իվելը գոյութիւն է ունեցել և ունի հասարակութեան, շահերով միմիանցից բոլորովին հակառակ, դասակարգերի մէջ, անընդհատ բացադրել է դասակարգային այդ անտագոնիզմը (շահերի հակառակութիւնը) և միշտ, պաշտպան կանգնելով մեծամասնութիւն կազմող աշխատաւոր դասակարգի շահերին, շարունակ մատնանի է եղել թէ ինչպէս այդ զրկւած դասակարգը պիտի մաքաւի իր զրկողների դէմ և թէ ինչպիսի հանգամանքներում ու պայմաններում այդ դարաւոր կռիւը կարող է աւարտ ստանալ, երբ վերջապէս կը տիրէ ընդհանրութեան համար կատարել ազատութիւն և ցանկալի տնտեսական ու քաղաքական հաւասարութիւն։

Յենեւելով այս սկզբունքների վրայ և պատկանելով այդ ուղղութեանը Հնչ. կուս. — ը հայկական գատին էլ միշտ աշխատել և աշխատում է տալ այնպիսի ուղղութիւն, որ Հայ աշխատաւոր դասակարգի — յեղափոխութեան այդ միակ զինուորական բանակի — արեան գոյով ձեռք բերելիք քաղաքական ազատութիւնը ո՞չ թէ մի նոր զէնք դառնայ կամ աւելի լայն ասպարէզ բանայ Հայ և օտար բուրժուա դասակարգի առաջ, է՛լ աւելի մեծ ոյժով հարստահարելու և ստրկացնելու աշխատաւոր դասակարգին, այլ որ ընդհակառակը՝ այս վերջինը միջոց ունենայ կարելիին չափ ընդարձակօրէն օգուելու ազատութեան այդ առաջին քայլից, աւելի ևս ընդարձակի նրան, որպէսզի կարելի լինի շուտ և արագ քայլերով հասնել այն քաղաքական ու տնտեսական կատարել հաւասարութեան, որի մասին յիշեցինք քիչ առաջ։ Եւ ճիշտ այդ նպատակին հասնելու համար է, որ հնչակեանները շատ կարևոր, նոյնիսկ անհրաժեշտ են համարում ՀՀՆց այժմանից պարզել ու լուսաբանել դասակարգային անտագոնիզմը, որպէսզի յեղափոխութեան ասպարէզը մտնող

հայը կատարելապէս գիտակից լինի թէ իր շահերին և թէ իր անելիքներին։

Ահա այս են մի քանի խօսքով Հնչակ. կուս. — ետն ծրագրերը և դաւանանքը։

Արդեօք Իրանակցութեան ըսկզբունքներն ու ուղղութիւնը համապատասխանում են դրանց։ Ի հարկէ ոչ, այլապէս ինչու պէտք է այդ երկու կուսակցութիւնները զատ-զատ գոյութիւն ունենային։

Իրանակցութիւնը չէ ընդունում սօցիալիզմը։ Եւ, ըստ երևոյթի, չէ ընդունում և դասակարգային կռիւ գոյութիւնը, թէև նրա բոլոր հրատարակութիւններից ու գրութիւններից պարզ երևում է, որ նրանք միշտ մեծ ու մանր բուրժուազիայի շահերն են պաշտպանում։ Իրանակցականները միշտ խուսափում են դասակարգային անտագոնիզմի մասին խօսել, որպէսզի դիւրութիւն ունենան աշխատաւոր դասակարգի ձեռք բերելու կրակից շագանակներ հանել բուրժուազիայի համար։ Եւ որպէսզի իրենց այդ ուղղութիւնը ծածկեն քոչարկին աշխատաւոր դասակարգից, նրանք Հայ ժողովրդի ազատութեան գործին աշխատում են այնպիսի կերպարանք ու գոյն տալ, որ կարծես թէ ազատութիւնը պահանջւում է ոչ թէ շնչաւոր էակներին — ժողովրդի համար, այլ Հայաստանի անշունչ քարերի, բոյսերի և գետակների համար։

Ինչ, նմանութիւն կա՞յ այդ երկու կուսակցութիւնների մէջ։ Ուրեմն ինչպէս մի կուսակցութիւնից հեռացողը կարող է միւս կուսակցութեան մէջ մտնել, առանց գաւաճանած լինելու իր նախկին համոզումներին։ Մենք, ի հարկէ, անգրագէտ կամ կիրառապետ ամբոխին շատ էլ չենք մեղադրի, որովհետև յիշու է որ չափազանց դժուար է այդպիսիների համար դաշնակցականների որոպայոյթաւ ու մշուշապատ մտքերի մէջ թփանցելը, բայց ինչ ասել այն ինտելիգենտ համարող ու հրապարակախօսութեան կամ խմբագիր լի-

նեկու հաւակնութիւն ունեցողն րին, որոնք գոնէ այնքան կա-
րողութիւն պիտի ունենան, որ
իրենց կարգացածները հասկա-
նան և փոքր ինչ ըմբռնեն, որ
Հնչակ. Կուս. — Կան և Դաշնակցու-
թեան միջև այնպիսի մի մեծ
գաղափարական վիճ կայ, որի
վրայից ցատկելուց առաջ «Աւարդ
պիտի այրի այն բոլորը, ինչին ևս
առաջ երկրպագուել էր եւ պիտի եր-
կրպագի այն բոլորին, ինչ առաջ
ինքն այրուել կաւ այրելու առժա-
նի էր համարուել » :

Ի՞նչ, պ. պ. դաւանափոխ-
ներ, դուք կարծում էք թէ շատ
պանծալի բան է այդպիսի մի
մարդու վիճակում լինելը : Եւ
գիտէ՞ք թէ ինչպիսի մարդիկ են
յաճախ այդ դրութեան մէջ ընկ-
նում : Եթէ չը գիտէք, ասենք
ձեզ : Այդպիսի մարդիկ լինում
են կամ չափազանց փոփոխամիտ
հոսանքներ, որոնք իրենց գաղա-
փարները նոյնչափ շուտ-շուտ են
փոխում, ինչպէս և իրենց գըր-
պանի թաշկինակները. կամ շա-
հախոյիբ շառլատանները, որոնց
համար արծաթն ու ածախ գնով
փառք վաստակելը աւելի մեծ նը-
շանակութիւն ունին, քան գաղա-
փարը, և կամ կատարեալ ոչխա-
րամիտ տգէտները, որոնք այս
կամ այն կուսակցութեան մէջ
են մտնում ըսկ բարեկամի կամ
խնամիի յիսթրուս համար :

Այժմ ձեզ ենք հարցնում,
ի՞նչ կարեւորութիւն և գին կա-
րող են ունենալ ձեր պարծենկոտ
յայտարարութիւնները փոքրի-
շատէ հասկացող մարդու համար :
Ձէ՞ որ դաւանափոխների վերո-
յիշեալ տեսակներից որինչէլ պատ-
կանէք, դարձեալ դուք շատ ու-
ղորմելի էք և ձեր պարծենկոտ
յայտարարութիւնները աւելի ձեզ
են արատաւորում ու խայտառա-
կում, երևան հանելով հասարա-
կութեան առաջ ձեր մտքի սնան-
կութիւնը, շահամոլ դաւաճանու-
թիւնն ու ոչխարամտութիւնը :

Երանի, հաղար երանի, որ
Հնչ. Սօց. յեղ. Կուսակցութիւնը
չուտով և իսպառ մաքրուի ձեզ
նմաններից ու մեր շարքերում
մնան միմիայն գիտակցական Սօց-
յեղափոխականները : Ի՞նչ քայլ-
պիտիներին ենք փնտռում, իսկ
գուք գնացէք թառեցէք այն աղ-
բանոցներում, որտեղ կամ կար-
Փափազեանները և կամ Հրաչեայ-
ներն են սիրում քըջուլ անել :
Բաքու Beniard

ԿՈՎԿԱՍՏԱՆ ԻՐԱՎԱՆՈՒԹԻՒՆԵՐ
II
Բ Ն Ա Կ Ա Ն Է

Ըմբռնած հայկական յեղա-
փոխութեան իմաստը, թարգման
հանդիսանալով հայութեան իրա-
կան պահանջներին, ծնունդը նրա
դառնացած կեանքի՝ Հնչակեան
Ծրագրերը՝ երբ համարձակ ու
վստահ հրապարակ գրեցաւ, երբ
նրա անվախ քարոզը առաջին
անգամ երևան եկաւ, — շատ-
շատերը ռազմային գործիչնե-
րիցս նրա դէմ յայտարարեցին
կատաղի կռիւ, որը շատ քիչ ան-
գամ է արտայայտել մարդա-
վայել կերպով, շատ սակաւ, կամ
բոլորովին, դուրս է եղել կու-
սակցական պայքարի մաքուր հո-
ղի վրայ, այլ նա միմիայն եղել
է եզրիտական :

Այդ կռիւը առաջ բերողը,
նրանց բոլորի քունը փակցնողը,
սեփական կաշին դիպչողը զան-
պիտան սօցիալիզմն էր, որը ա-
ռաջին անգամ էր, որ մուտ գոր-
ծեց հայութեան մէջ, առաջին
անգամ, որ հայութեան գլխին
պայթեց նրա վեհ քարոզը և խոս-
տացաւ նրան նոր կեանք, ազատ,
երանելի ապագայ, ուր հանդիստ
կառնէ հայութեան, մարդկու-
թեան ամենատանջած մեծամաս-
նութիւնը, որը այսօր սարուկ
արդիւնաբերող է, աշխարհի ա-
նիւը դարձնող մի վիթխարի ոյժ,
սակայն ոչ այնքան գիտակից իր
այդ ոյժին :

Հրապարակը դարձաւ ազմը-
կալի, փոթորակեց : «Անիշխանա-
կաններս են, ուղղապիստներս են,
ողապաժամ ծնւածներս են, « օտա-
րացած հայերս են, « հայ գիւ-
ղացու վզին զանազան թէօրիա-
ներս գօռով փաթաթողներս են և
ուրիշ նման անտեղի, ծիծաղա-
չարժ ածականներ թափեցան
Հնչակեանների գլխին՝ բոլորի
կողմից :

Այո՛, նրանք վատարար ծաղ-
րեցին, հալածեցին ու հարածե-
ցին վեհը, բարձրը և չըխնա-
յեցին ոչ մի ջանք տապալելու
այն՝ զանազան մտացածին ամ-
բաստանութիւններով և լիբը ձեռ-
նարկներով : Իսկ նա, Հնչակեան
կուսակցութիւնը, իր հրապարակ
գրած դաւանանքի ճշմարտու-
թեան և անհրաժեշտութեան գի-
տակից, համարած, առաջ էր
տանում իր գործը, վերջինիս
թշնամիներին, բոլոր կարգի և
գոյնի, անխնայ խարազանելով :
Նա միևնոյն ժամանակ շարունա-
կում էր զօրանալ, իր սօցիալիս-
տական գաղափարները աւելի և
աւելի լայն չափերով տարածել մեր
խաւար կեանքում ու հաւաքել իր
շուրջը մեծաքանակ հետևողներ :
Նա այդպիսով, միշտ առաջ էր ըն-
թանում, հնչեցնելով ժողովուր-
դը միմիայն սօցիալիզմով կեր-
ջանկանանայ, իսկ դրան ի պա-
տասխան հակառակորդների դաշ-
նակցութիւնը փրփրած կանչում
էր՝ պէտք է մէջտեղից վերաց-
նել «Հնչակը» և իր սօցիալիզմը,
որը օտար է մեզ համար :

Սակայն հարց. — Ընկա՞ւ սօ-
ցիալիզմը իր բարձրութիւնից,
տեղի՞ տուց յետադիմական, պահ-
պանողական, բուրժուազական
մտքերով տողորած փթած տար-
րերին, դադարե՞ց նրա քարոզը,
սահմանափակե՞ց նրա անգամ-
ների թիւը : Ա՞հ, ոչ : Նա միշտ
անարգել առաջ կը գնայ և ամեն
տեղ, ուր առաջին անգամ նա
մուտք է գործել, հանդիպել է

քարկոծումների, հայհոյանքների
և պառաւական մտքերի թշնամա-
կան վերաբերումներին, ապա կա-
մաց-կամաց տեղ է գրաւել, զար-
գացել, զօրնղացել և ի վերջոյ
բոլորին յաղթահարել ու ընդուն-
ել ծափահարութեամբ բուռն,
ողևուրած : Այդպէս էլ մեզա-
նում է :

Իրերը իրենցը կանեն առանց
հարցնելու թէ այս կամ այն կու-
սակցութիւնը թղթի վրայ ի՞նչ
պէս է մեկնաբանում հայկական
իրականութիւնը : Եւ այն կուսակ-
ցութիւնը, որը իրերի բնական
ընթացքի հետ է գնում, իւր
գոյութեան հիմքը նրանց վրայ
գնում, որը կեանքի այժմեան
պահանջներին կատարելապէս ըն-
դունակ է հանդիսանում բաւա-
րարութիւն տալու և որը, ու-
րեմն դուրս է եկած հէնց կեան-
քի արգանդից, — կարող է յա-
րատել իննչ, իր պատմական դե-
րը աստիճանաբար կատարելով
ընդգրկել նորանոր հորիզոններ
և միշտ մնալ թարմ, կենսունակ,
իսկ այն, որը հակառակն է ա-
նում, դատապարտուած է ան-
շարժութեան, քայքայման և մա-
հացման :

Եւ այսօր աւելի պարզ և կեն-
դանի փաստեր կան մեր իսկ
կեանքում, ապացուցանող, որ
«Հնչակի» 16-տարւայ սօցիալիս-
տական քարոզը, նրա առաջացը-
րած սօցիալիստական գրականու-
թիւնը, ապարդիւն չէ անցել, որ
նրա ցանած սերմերը ցանկալի
պտուղներ են տալիս որ նրա աշ-
խարհահայեացքը եղել է ճշմա-
րիտ և ուրեմն նա իրատեսք ունի
ասելու իւր հին հակառակորդնե-
րին՝ «դիւի ընկաք, այո, բայց
ուչ և դա ձեզ վրայ թանկ նըս-
տաւ, բայց մի խոչոր արատ եղաւ
ձեր հակասութիւնը և որդայթ-
ներ լարելը մեր դէմ, դա թող
կեանքի ապտակ լինի ձեր երե-
սին, դա թող պատմութեան այժմ
թեթեւաքային լինի ձեզ համար

Պ Ա Ր Բ Ն Ե Ի Ո Ր .

Վաճառում է հրնոցը,
Ժայթքում են բոցերը,
Գործում է դարբնոցը,
Գործում են կըրակն ու կայծերը :
Հուրերի շտեմարան,
Հուրերի սահք ու հողմ,
Դարբնոցն է վառարան,
Կըրակի լոյսն ընկած ամեն կողմ :
Չա՛րկ, պի՛նդ զարկ, զարբնեւոր,
Հաստատ է քո գնդան ..
Եւ մուրճի ծանրութեան
Տակ ձայնում է թնդոց ահաւոր :
Շիկացած երկաթը,
Ասես օձ կըրակի,
Ի՞նչ պիբ իր սապատը
Օղակով է կեռում,
Կամ ձգում շեչտակի . —
Աշխատանքը երկաթն է կըրում :

Գործում է դարբնոցը . —
Կայծերի շտեմարան գործատու :
Չնդանը մուրճի տակ ևւ բոցը
Եւ քանքարը մարդու
Ստեղծում են միատեղ
Գործը փեճիկ անհղ
Կատուցման, աւերման —
Եւ կեանքի, ևւ մահան :

Ծխնելոյզի բերան
Դարձել է կրակարան .
Բոցերը բարդ սիւնով
Ժայթքում են գէպի վեր
Հրաբխի իւր լաւեր :
Ի՞նչնչոն թանձրը ձիւնով
Շուրջ գաշտն է ծածկըւած —
Ըսպիտակ սաւանի մի զանգւած :
Հօրիզօնն իրիկան
Կախած է քրնաթափ :
Թըմբած գիբիւր մահան՝
Ամպամած երկինքն է անըսթափ :
Աղօտ, միապաղաղ
Մի լոյս է շուրջ տիրում :
Ամայի ու խաղաղ,
Ձիւնի տակ սկայ դաբաղ՝
Երկիրը թաղւած է ամպերում :

Գործում է դարբնոցը :
Դըռան դէմ հրնոցը
Ի՞նչպի դուրսն արնագոյն
Շեւրտով է լոյս թափում :
Հրդեհի է հանդուհ :
Որ դարբնոցն է լափում :
Արնալոյս հուր ու բոց,
Չնդանի զարկ, թնդոց —
Սոսկ կեանքն է շարաշուք
Այն դաշտում անշըշուկ,
Ամայի, խուլ, անվերջ,
Ամպի տակ, ձիւնի մէջ :

Գործում է դարբնեւորն առոյգ դէմքն այրւած,
Իջեցնում է հարւած
Հարւածի ետեւից, թնդացնում է շէնքը,
Եւ ստեղծում է գէնքը :
Այդ երկաթը, որի շեղքն ասես
Բոցի պէս
Ձգում է սպառնակ սն սուսերով,
Իրա մէջ կըրում է շարքըւած յոյսերով
Տանջանքի ընթացքը ողջ մարդկան պատմութեան
Ծոցումը դարերի մըթութեան :
Յաղթանակը մահան
Սուսերի ծայրին է գողի պէս թագնւած,
Արնաների սկայ սաւան
Սուսերի ծայրիցն է մարդկութեամբ հագնւած :
Երկրագունձը նրա տակ ելնում է անեղ թո՛նդ
Մինչեւ իր արգանդի խոր անդունդ,
Աստղերը դուռնաւում, երկինքը մըթագնում,
Ողջ աշխարհը սեւ սուգ է հաղնում,
Մարդը մարդ է սպանում,
Մարդ — ստեղծողը մարդի,
Կոյր հարւածն նրա ցեղն է եղձանում,
Որ մահն իր ճանապարհը հարթի :
Ատելութիւն, նախանձ, ոխ, սին փառք,
Ազան անի, ցատու, քէն, ամենայն մոլի բարք,
Կապեղով միմեանց հետ շղթայով ամբապիտդ,
Ծորելով իրանցից կըբերի մոլեխիտդ,
Պատառում են, ջարդում բազմատանջ
Մարդկան լանջ,
Մինչ անարգ շղթայի ստրկական կապանքը
Սորտակում մարդկութեան ազատ ու սուրբ կեանքը
Իրատեսքն ոտնակոխ, բիրտ ոյժը՝ յաղթական :

Հասկացա՞ք վերջապէս որոշ չափով :

Եւ վերոյիշեալ կենդանի փոստերից մէկը նախ այն է, որ Դրոշակեան կուսակցութեան մէջ պառակտումներ է բնկել : Մի կազմակերպութիւն, ուր գտնուում են բազմաթիւ տարրեր իրենց բազմազան աշխարհահայեցքներով, գաւառներէն բերով, և որը այդպիսով իրենց ներկայացնում է մի բարդ զանգւած, քառասկան ամբողջութիւն, — պէտք է անպատճառ իր մէջ վերջիվերջոյ ունենայ պառակտում, որը կատարելապէս բնական է : Այդ ամբողջութիւնը, որը մի կերպ իր գոյութիւնը՝ իբրև այդպիսի պահում էր, այսօր դատապարտած է քայքայման աստիճանաբար և կը մահանայ, գէթ կովկասում, եթէ չընդունէ այն, ինչ 16-տարի շարունակ քարոզել է անմահ «Հնչակ»ը և ինչ քարոզում են մեր այլ թերթերը : Եւ ի՞նչ, այդ քարոզի, այդ երկար ժամանակայ սօցիալիստական պրոպագանդի արդիւնք չէ՞, որոշ չափով, Դրոշակեանների ներկայիս պառակտումը, որը կատարել է նրանց մէջ սօցիալիզմի և նրա համապատասխան գործունէութեան չը գոյութեան պատճառով : Ի՞նչ կասեն մեզ հին և նոր Դրոշակեանները այդ արձանացած փաստի մասին, որը մի նախատինք է այսօր այն հակառակորդին, որը զեռ էր գոյութեան սկզբի օրից վայրագաբար սկսեց հալածել փրկարար գաղափարը :

Երկրորդ այն, որ այսօր կովկասի հայութիւնը, բացարձակ կարելի է ասել, յեղափոխական տրամագրութեան մէջ է, քաղաքական ակտիւ գործունէութեան կարիք է զգում կովկասում և նա իւր կատարել թշնամութիւնը արդէն մի քանի անգամ արտայայտեց և այն էլ երբեմն զէնքով :

Թերևս հին-Դրոշակեանները յամառ են ու իրենց թոյլ կուրծ-

քերը գէ՛տ՝ տան կովկասի բնական շարժումներին, բանուորների խլրտումները ուժգին հոսանքին : Եւ այն ժամանակ վա՛յ նրանց : Բայց սպասենք մշտիկ ապագային :

Իսկ նոր Դրոշակեանները այժմ զանազան մանր-մունր փրկակցիներով բաժանուած՝ դեգերում են զեռ համալուծներ, պաւանները որոնելու աշխարհում, և զեռ որոշակի իրենցից մի լուրջ բան չեն ներկայացնում, որ արժենար խօսել նրանց մասին : Իրենց գոյութիւնը իմաց են տալիս մեզ թուրքիկ թերթերով միայն, որոնք լի են անճոռնի հակասութիւններով, որոնք միաժամանակ թէ՛ նացիօնալիստական են, թէ՛ չօվինիստական, թէ՛ սօցիալ դեմօկրատական . . . :

Բայց ցաւալին այն է, որ նոր-Դրոշակեանները կարծես երգել են սօցիալիստ լի՛նքով էլ նոյն դիրքը բռնել՝ ինչ ունէր հին-Դրոշակեանը : Յաւալին այն է, որ նոր-Դրոշակեանները բռնուած են նոր կուսակցութիւն թրխելու ցաւից, այն ինչ իրենց աչքի առաջ կայ մի կուսակցութիւն աւելի լայն իր աշխարհա հայեացքով, քան Դրոշակեանը : Սակայն նրանք էլ կարծես չեն յուսացել հին ատերութիւնը և ստացած մտրակները :

Թող ընթերցողը չը կարծէ, որ այստեղ հին հաշիւները մաքրելու և կամ կուսակցական անմիտ ինքնագովութիւնից առաջացած միտքն է, որ մեզ գրողում է խօսել անցեալի և նրա հետ կապուած ներկայի մասին, յիշել Հնչակեանների, իբրև սօցիալիստների, գէ՛տ՝ մղւած կռիւր և նրանց գլխին թափուած զրոպարտութիւնները, որոնք խոստովանելու ազնուութիւն, քաջութիւն պէտք է ունենայ այն մէկը, ով ճշմարիտ գործիչ է, զերծ կուսակցական կաշկանդումներից, ով իրեն ազատ է զգում գրելու

և խօսելու մէջ, ով վերջապէս ճշմարիտ սօցիալիստ է, որովհետեւ Հնչակեանների վրայով մոլեգնարար հարածուել, հալածուել է այն գաղափարը, որը այժմ միայն իրանք ուզում են կրել :

Ոչ, ասում ենք, այստեղ մեր նպատակը չէ հին վերքերի մաքիւն խօսել : Այլ ուզում էինք մատնանիշ անել այն բանի վրայ, որ մենք շատ վաղուց ենք հասկացել և ըմբռնել այն, ինչ այժմ ուրիշը, որոշ չափով, ընդունում է, և մենք, այդպէս լինելով, հէնց իրենց, նորերի կողմից ենթակայ ենք եղել հալածանքի, հալածանք, որի միջից գարձեալ յաղթական գուրեկանք և այդ յաղթանակի պտուղներ են հէնց իրենք նոր Դրոշակեանները, որոնք պէտք է զղջան իրենց կատարածի համար մեր վերաբերմամբ :

Այդպէս է կեանքի անողորմ վճիւրը : Ով նրա հետ կերթայ՝ կ'ապրի, ով ոչ՝ կը մեռնի : Եւ թող աւելի ևս ապրի այն կուսակցութիւնը, որը թէ՛ կեանքի հետ է գնացել և թէ՛ նրա առաջնորդը եղել :

Բազու 10 դեկտ. 1903. Անրխան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Անյիւս կիրակի օր, տեղույս ազգային վարժարանի սրահին մէջ, Դաշնակցութեան ներկայացուցիչ պ. Վարդօ բանախօսեց, նիւթ ունենալով «ազգային յեղափոխութեան ներկայ վիճակը» :

Պ. բանախօսը պատմական թուուցիկ ակնարկով մը շնչոնց 60—70 թուականները, մատնանշելով այդ ժամանակի հայութեան ոգևորութեան ազգակները ու կանգնեցում ասնաւորաբար Տաճկահայրու սահմանադրութեան

վրայ : Ապա անցաւ 70—90 թուականները, նկարագրելով այն ատենուան հայկական իրականութիւնը և ըսաւ : — Կեանքն է որ ամեն ինչ կը ծնի, և կեանքն է որ ծնաւ 80-ական թուականներու վերջերը Հնչակեան կուսակցութիւնը, որ կրցաւ իր ժամանակի սգիին ու պահանջին համեմատ վարել Հայ Յեղ. գործը, նետուելով միանգամայն արիւնոտ գաշտը, ընելու այն՝ ինչ որ կրնար :

Պ. բանախօսը գեղեցիկ կերպով ընդգծեց Հնչակեան գործունէութիւնը մինչև 96 թուականը, մատնանշելով Սասունի և Զէյթունի ապստամբութիւններն և այլ շարժումներն ու ցոյցերը և հարց գրաւ — ուրեմն ի՞նչ ըրաւ Հնչ. կուս. —ը Հայ. Յեղ. պատմութեան մէջ : Նոյն ինքն պ. Վարդօ իր հարցին պատասխանեց շատ ճիշտ տրամաբանութեամբ, թէ՛ ոչնչ. կուս. —ը Հայ ժողովրդին տուաւ մայիս 15-ի թէֆորմները, այսինքն Հնչ. կուս. այդ բուռն գործունէութեան արդիւնքն եղաւ՝ յիշեալ թէֆորմները :

Ասկէ անմիջապէս յետոյ պ. բանախօսը յարեց, թէ՛ ուրեմն Հնչակեան կուս. —ը սկսաւ հայ. յեղ. կռիւր և տարաւ այնքան և այնքան ժամանակ, որքան ոյժ և կարողութիւն ունէր և ապա կանգնեցաւ, դադար առաւ, որովհետեւ յոգնած էր, կաշտուելով պէ՛տք ունէր :

Այստեղ պ. Վարդօ ցոյց տուաւ Հնչ. կուսակցութեան կանգ առնելուն մի շարք պատճառները, որոնց մէջ յայտնի տեղ տուաւ հակայեղափոխական տարրին, իրենց պարագլուխ ունենալով Արփիարը, չմոռնալով սակայն ընդհ. կոտորածներու դերը Հնչ. թէակցիայի մէջ :

Պ. Վարդօն շարունակեց այսպէս. — երբ, ըսաւ, Հնչակեանները այդպէս կը գործէին, ուրիշ

Օրէնքը՝ խարազան, Լոյսն, արդարը, մեծը՝ պարտաւսններ մշտական, Մարդը, մարդն էլ՝ գազան . . .

Գործում է դարբնոցը . . . Վեր քաջած թեւնոցը Դարբնեւորն աւելի ուժգնութեամբ, Ջրղային սաստկութեամբ Ջարնում է իր մուրճը Չնգանին, և շուրջը Ցայտում են բոցերը . . . Ցայտում են կայծերը Նրա աչքից, Եւ կրծքից Յանկարծ դուրս է սողում հառաչանք — Չայրոյթի խոր տանջանք :

Բայց ի՞նչ . . . Ա՛հ, աշխատանքն, ըստեղծի՛չ, արարի՛չ Մարդկային կենցաղի, Դարձել է մարդկութեան գոյութեան աւերի՛չ, Թաւալիլով նըրան մինչ չէ՛մքը գագաղի Ի՛նչ, գալտի ծաղիկըն արիւնով է ներկւած, Մինչ աշխատաւորի ձեռքով հողն է ներկւած : Կենսատու արեգակն իր անմահ ջերմութեամբ, Իր լոյսի յարստու թարթիթեամբ, Որ կեանք է պարգեւում բընութեան Բեղմնաւոր արգանդին, Ի՛նչ, ըսկսած հընութեան Խորքից, հակառակ իր խանդին, Ի՛կերի լէգէօն է տեսել իր տակը՝

Մինչ լեռան բարձունքը, մինչ ծովի յատակը : Ի՛նչ, մարդու սուրբ ինքնին աղաւթն խրախճանք, Գիշտիչ անգղի ճանկ Ա՛յն սիրտն է խցրոտում որ ունէր իր կեանքը, Որ գիտէր զգալ, տանջուել ու սիրել . . . Եւ այդ սիրտը մասնան սաւ գիրկն է գըրթել Սուսնը, որ ինքը՝ մարդու ձեռքն է ստեղծել Եւ սուրբ աշխատանքի սուրբ օրէնքը կեղծել . . . Աշխատանք, ըստեղծիչ, արարիչ Մարդկային կենցաղի, Նրա բախտի, յիծաղի, Որ տալիս է նըրա հանճարին լայն թըրիչ, Որ թանճըր քրտինքի ու սիրտից արցունքի Աղբիւրից ստեղծում է վայելքն իր արդիւնքի, Որ մարդկան ուղին է դէպ զայսու ապագան, Փրկութիւն յաղթական, Մոցը խաղաղութեան, սիրոյ ու բերկրանքի, — Ի՛նչ, նա դեռ կըռում է շղթաները կեանքի, Դեռ մա՛հ է, արի՛ւն է մարդկային, Խողխողման գեռ զէ՛նք է դիւային, (փառք . . . Ի՛նչ, զէ՛նք, որ կըռում են քաղութիւն, պարծանք, Ա՛հ, այո՛, նըղոված ևս արիւնասխտւմ բարք, Եւ աղէտ, և անէ՛ծք, խաւար, ախո, ոճիւր, դա՛ւ, Բայց արգարտութիւն — ո՛չ, Պարտականութիւն — ո՛չ, Իրաւունք, պատիւ, զործ, լոյս, սէ՛ր, կեանք — բնա՛ւ, Այլ մարդը շարութեան է ըսպան, Այլ մարդը՝ լոկ գաղան, այլ մարդը՝ մարդապան . . .

Ժայթքում են կայծերը Դարբնեւորի աչքից — նրա սրտի հընոցը . . . Եւ մուրճի հարածից մէջ ուժգին Չնգանը թնդաց պինդ, Սուսերի երկաթը հանեց խուլ մի շըրտիթ, Կոտրեց, զըրթեց ցած դեպին : Չեռքին մուրճ, Սիրտը լի վերքերով, Նայեց շուրջ Դարբնեւորն արնայից աչքերով Եւ վայրի ոստումով Թըրաւ դուրս ստեղծում . . . Սկայ դաշտն է տարածւած — Ըսգիտակ մի զանգւած — Ամայի, խուլ, անլերջ, Ամպի տակ, ձիւնի մէջ մի հակայ ուրաւական կանգնած էր թեւերը դէպի վեր, Մանրը մուրճը ձեռքին սպառնական Եւ սիրտը բազմավէր, Եւ թըրում էր, թէ՛ նս ուղղում էր խիտ նըղոյթ Ի՛էպ աննուն հեռատանն՝ ուր թայտուն են դեռ բովք, Ի՛էպ անպըր, որ դեռ արբիւք են արեւի Աւետման բարեւի . . . Եւ մինչդեռ նրա տեսքն էր մարտական, Նրա ճիւն էր՝ խաղաղութիւն մարդկան :

Գործում է դարբնոցը : Ժայթքում են բոցերը :

Լ և ո և ն ց .

